

## ԻՆՔՆԱՎՍՏԱՅՈՒԹԻՒՆ

Յայտնի ամերիկացի հեղինակ և իմաստասէր Բայլֆ Ուայլը Էմբերսոնը մի փոքրիկ գրքոյկ է հրատարակել այն խնդրի մասին, թէ որքան կորստաբեր է մարդկութեան համար, երբ մարդիկ բաւական չափով չեն գնահատում սեպհական ուժերը և սեպհական խելքին հաւատալու պահանջը: Մեր աղմկալից օրերում, երբ բոլոր հասկացողութիւնները շփոթուած են, երբ խելքի, գիտութեան, ազնուութեան փոխարէն կոպիտ և բռնի ոյժն է հեղինակութիւն ստացել հասարակական գործերում, Էմբերսոնի իմաստալից գրքոյկի բովանդակութեան համառօտ փոխադրութիւնը, կարծում ենք, հետաքրքրական նիւթ է մեր ընթերցողների համար:

Նախ՝ հեղինակը հարց է տալիս, թէ ինչո՞ւ մարդ ինքն իրան չէ հաւատում: Ինչո՞ւ համար, ասում է նա, մենք չենք հաւատում, որ մեր սրտից բխած անկեղծ զգացմունքը համակրանք կգտնի ուրիշներից: Մինչև այժմ մենք սովոր ենք կարծելու, որ մաքի ինքնուրոյնութիւնը յատուկ է միայն անտանի, բոլորից ճանաչուած իմաստուններին: Բայց ժամանակ է համոզուելու, որ երբ մենք արտայայտում ենք մեր ներքին մտքերը, նրանք անխուսափելի կերպով և շատ ուրիշ մարդկանց սեպհականութիւն են դառնում, որովհետև մարդկանց հոգիների մէջ ազգակցութիւն կայ: Սրանով է բացատրւում, որ շատ անգամ երբեմն արտայայտած մեր մաքերը նորից մեզ են հաղորդւում ուրիշներից: Մեծ իմաստունների և մտածողների արժանիքը հէնց նրանումն է կայանում, որ նրանք իրանց առաջ եղած գրքերից և աւանդութիւններից անկախ արտայայտել են այն, ինչ որ իրենք են մտածել և ոչ թէ

ինչ որ իրենցից առաջ ապրած մարդիկ կամ շրջապատողները: Այսպէս, մեզանից ամեն մէկը պիտի թոյլ չտայ վերապիլու իւր այն լուսաւոր մտքերը, որոնք երբեմնապէս կայծի պէս փայլում են մեր գիտակցութեան մէջ:

Մեր ամեն մէկի համար այսուամենայնիւ անձնական մտքերի այսպիսի ներքին փայլումները աւելի մեծ նշանակութիւն ունեն՝ քան թէ աստերի ամբողջ համակարգութեանց դիտելը և բանաստեղծների ու փիլիսոփաների երկերի ուսումնասիրութիւնը: Բայց սակայն մենք քանի քանի անգամ ենք թողնում առանց ուշադրութեան մեր դիտում ծագած շատ նշանաւոր և գեղեցիկ մտքեր միմիայն այն պատճառով, որ նրանք մեր սեփականն են: Իսկ երբ նոյն մտքերը մենք կարդում ենք որ և է յայտնի հեղինակի գրուածներում՝ հիանում ենք այդ մտքերի պարզութեամբ և հանճարեղ համարում:

Հոչակաւոր մտածողների լաւագոյն գրուածների ամենալաւ խրատը այն է, որ մենք սովորում ենք անկեղծ լինել և մեր սեպհական հոգու ձգտումներին հաւատարիմ մինչև անգամ այն ժամանակ, երբ մենք պարտաւոր ենք լինում ամբողջ մարդկութեան կարծիքին էլ հակառակ լինելու: Շատ անգամ մարդս ինքը գիտակցում է և տեսնում, որ նմանողութիւնը իսկապէս ինքնասպանութիւն է, որ նա պարտաւոր է իւր սեպհական մտքերի և զգացմունքների հաշիւը տեսնել և քննել թէ ինչ լաւ և վատ կողմեր ունի ինքը, թիւ է ինքը իսկապէս և ինչ պիտի լինի: Մարդ պիտի լաւ իմանայ, որ թէև բնութիւնը լի է ամեն տեսակ բարիքներով, բայց ինքը կարող է սնունդ ստանալ ու կշտանալ միմիայն իւր ձեռքերի և իւր աշխատանքի պտուղներով: Մարդս բաղտաւոր է զգում իրան միմիայն այն ժամանակ, երբ որ նա կարող է վստահաբար ասել, որ իւր սեպհական գործը ինքն է կատարել, որ իւր աշխատանքի մէջ հոգի է դրել և ի կատար է ածել որքան կարող էր լաւ: Բայց եթէ գործը կատարում է անփոյթ, առանց գիտակցութեան՝ նա ոչ միթարութիւն և ոչ ուրախութիւն չի կարող զգալ:

Մարդ պարտական է արտայայտել միշտ բացարձակ, անվախ և առանց ծածկելու իւր դաւանանքը և համոզմունքները: Իսկ մենք առհասարակ հազիւ վստահութիւն ունինք ցոյց տալու մեր իսկական պատկերի և մտքերի մի չնչին մասը և շատ անգամ էլ ամաչում ենք մեր գիտակցած ճշմարտութիւնը յայտնելու, որին պարտական ենք իրօք ծառայելու: Պէտք է վերջապէս հասկանանք, որ մենք ճշմարտութիւնը ուսանում ենք նրանք

ծառայելու համար և որ պարտական ենք ուրիշներին հաղորդելու անկեղծօրէն այն, ինչ որ մենք իմացել ենք: Այս կողմից ընուծիւնը մեղ օրինակ է տալիս երեխաներին: Երեխան ամեն տեղ միատեսակ է, որպէս տանը. նա անվախ է և անպատասխանատու: Նա ուղղակի արտայայտում է իւր մտքերը և զգացմունքները առանց յետին մտքերի, նա պարզ ասում է՝ հաւանում է թէ ոչ ձեզ, դուք նրան ատելի՞ էք թէ սիրելի, առանց մտածելու այն հետևանքների, օգուտի կամ վնասի մասին, որ կարող են ծագել նրա խօսքերից: Դուք կարող էք կեղծաւորել երկխոսյին, բայց նա երբէք: Չափահաս մարդը, ընդհակառակ, ինքը իւր գերին է, նա միշտ զոյր է: Մարդ շատ լաւ գիտէ, որ իւր ամեն անկախ վարմունքի կամ անվախ խօսքի համար հարիւրաւոր մարդկանց՝ ուշադրութեան առարկայ է դառնալու և նուազեցնելու է իւր դէմ նրանց ատելութիւնը կամ համակրանքը: Եւ որովհետև նա զգում է, որ ինքը աչքի է ընկնում՝ դառնում է վախկոտ և անվճռական: Բայց եթէ մարդ ազատուի ուրիշների կարծիքների ազդեցութիւնից՝ և մտածէ ու գործէ ինքնուրոյնաբար, անկախ, ուղղակի և անկաշռո, առանց նախապաշարմունքների՝ նա իրօք կդառնար հոգեկան մեծ ուժի տէր: Այս ուժը կունենար մշտական թարմութեան հրապոյր, այս տեսակ մարդու կարծիքները չէին մնալ միայն նրա մտքերը, այլ կդառնային հանրամարդկային և արդար, նրա խօսքերը համոզեցուցիչ կլինին և նետի պէս կզարթեցնեն ուրիշների գիտակցութիւնը՝ սթափեցնելով մարդկանց անշարժութիւնից:

Այսպիսի անկախ հանրամարդկային և բարձր ճշմարտութեան ներքին ձայն մենք լսում ենք, երբ մենք մենակ ենք մնացած լինում, բայց այս հզօր ձայնը հետզհետէ թուլանում է և խլանում, երբ մենք աշխարհային ունայնութեան հետ խառնուում ենք: Մարդկային հասարակութիւնը կարծես մի տեսակ դաւադրութիւն ունի իւր անդամներին անվերջ մանկութեան մէջ պահելու. կարծես հասարակութիւնը կերակրում է և յայտնի բարիքներ է տալիս այն պայմանով, որ՝ անհատը հրաժարուի անհատական ազատութիւնից և զարգացումից: Աշխարհը պահանջում է, որ մարդիկ հպատակուեն նրա կարգերին և նա ատում է անհատի անկախութիւնը և հոգեկան ինքնուրոյնութիւնը, այլ յարգում է միայն ընդհանուրի ճաշակը և ինչոր ժամանակի և սովորութեան ուժով ընդունուած է: Սակայն՝ ով որ կամենում է իսկական մարդ լինել՝ նա պիտի աշխարհին դուր գալու ցանկութիւնը իրանից հեռացնէ և եթէ կամենում է իս-

կական կեանքով պարել՝ նա չպիտի ընդունուած չափով որոշէ բարին ու չարը, այլ ինքնուրոյնաբար փնտռէ իսկական բարին: Չկայ աւելի սուրբ և արդիւնաւոր գործ, քան ինքնուրոյն մտածողութիւնը և հոգեկան իմաստասիրութիւնը:

Մարդ ամաչում է, երբոր մտաբերում է, թէ որքան յաճախ զոհում է իւր սեպհական համոզմունքները և խոնարհում է քարացած հիմնարկութիւնների և սովորութիւնների առաջ: Ժամանակ է, որ մարդս ճանաչէ իւր գիւնն ու արժէքը և իմանայ, որ ոչ մարդկանց կարծիքն է հարկաւոր, այլ զուտ ճշմարտութիւնը և միմիայն ճշմարտութիւնը:

Անկախ կերպով վարուելը արդարև շատ դժուար է, որովհետև ամեն քայլափոխում հանդիպում ենք մարդկանց, որոնք խանգարում են մեզ իրենց յանդգնութեամբ և անկոչ խորհուրդներով: Սակայն միմիայն անկախ մտածելու և գործելու մէջ է հոգեկան իմաստութիւնը և այսպիսի մարդիկ կարող են պահել իրենց անկախութիւնը նոյն իսկ հասարակութեան մէջ էլ:

Մեր ուժերի մեծ մասը վատնում ենք մենք ընդունուած սովորութիւններում, որոնք թէպէտև մեր սրտին մօտ չեն, մեր ազատ ժամանակը կորցնում ենք կուսակցական անմիտ պայքարներում, և այսպիսով ոչնչացնում ենք մեր ինքնուրոյնութիւնը: Բայց փորձեցէք զբաղուել ձեր ընտելեան յատուկ գործով և դուք կբարձրանաք ամբոխից և կկատարէք օգտակար գործ: Հասարակական կարծիքներին յարուելը աչքակապուկ խաղալու պէս մի բան է. ընդհանուրի կարծիքներին դէմ չդնալու համար մարդ հրաժարուում է իւր սեպհական աչքերից և իրերի վերայ նայում է ուրիշների տեսածով և ուրիշների խելքով. մի որևէ աղանդի կամ մեկուսացած ընկերութեան պատկանողը չի կարող այդ մարդկանց շրջանում լսել ոչ մի թարմ և ոգևորուած խօսք, որովհետև այնտեղ բոլորը մի նեղ ուղղութեամբ են մտածում և մի կողմ են նայում. բացի ուրիշների կարծիքներին ստրկաբար յարմարուելը՝ մենք մեր անկախութիւնը կորցնում ենք անհետևողական չերելու պատճառով:

Այս վերջին հանգամանքը ստիպում է մեզ վախենալ մեր անցեալ կեանքը քննադատելուց: Բայց չէ՞ որ մարդ իր ուսերի վերայ գլուխ ունի, որ անընդհատաբար մտածում է. ուստի և շատ բնական կլինի եթէ կենդանի և մտածող մարդը վերստուգում է իւր մտքերը, զգացմունքները և գործերը: Միմիայն փոզրոզի մարդիկ կարող են վախենալ անհետևողական լինելուց, իսկ ինքնուրոյն հոգու տէր մարդու համար այս հանգա-

մանքը ոչինչ նշանակութիւն չունի: Ինքնուրոյն և իմաստուն մարդը պարտական է միմիայն անկեղծ լինել, իսկ մնացեալը դատարկ բաներ են:

Իրաւ է որ այս տեսակ մարդկանց շատերը չեն կարող հասկանալ, բայց չէ՞ որ բոլոր ինքնուրոյն մտածողները անհասկանալի են եղել իրենց ժամանակակիցներից շատերին: Լաւ նաւերի զնացքը կատարուում է ոչ միշտ ուղիղ գծով, բայց նըպատակին նա ուղիղ ճանապարհով է հասնում: Այսպիսով մարդու պարզ, բնական և անկեղծ գործերը նոյնպէս աւելի օգտաւէտ են:

Գործեցէք միշտ պարզ և անկեղծ սրտով առանց մտածելու հետևանքների մասին: Աշխարհը չէ տանում ինքնուրոյն մարդկանց, որովհետև նրանց հոգու արտայայտութիւնները թուլացնում են անցեալի հեղինակութիւնը, ամօթով են ծածկում շատ անգամ մարդկութեան քուրմերի երեսը և սորվեցնում են չհաւատալ աշխարհի ունայն խօսքերին: Մինչդեռ իսկական մարդը հէնց նա է, ով վստահութիւն ունի բացարձակ ասելով՝ թէ ես մարդ եմ, որովհետև ինքնուրոյնաբար եմ մտածում:

Մենք առնասարակ երեխաների ենք նման, որոնք կրկնում են իրենց տատերից և ուսուցիչներից լսած անհերքելի ճշմարտութիւններ, իսկ մի փոքր մեծանալուց յետոյ՝ կեանքում պատահած նշանաւոր մարդկանց խօսքեր: Բաղդաւոր է նա, ով կարող է գէթ առանձնանալով պահպանել հաւատ դէպի իւր ուժերը: Վեհ պիտի լինի այն մարդու հոգին, կամքը ամուր, հայեացքը պարզ, ով կարող է իւր ներքին աշխարհով փոխարինել ունայն հասարակութիւնը, սովորութիւնները և ընդունուած կարգերը և ապրել միմիայն ներքին համոզմունքներով և ոչ ուրիշների պէս անողոք պահանջի ուժի ազդեցութեան տակ: Բայց այժմեան հասարակութիւնը սրբան աղքատ է ուժեղ խելքի տէր մարդկանցով, որպէս չորացել են մարդկանց ջղերը և սիրտը, մենք վախենում ենք ճշմարտութիւնից, վախենում ենք միմեանցից, մենք թուլամորթ ենք և լալկան:

Ինչպէս որ մենք ինքնուրոյնօրէն կեանքը հասկանալու անընդունակ ենք, չունինք ինքնուրոյն կրթութիւն, արուեստ, նոյնպէս և ոչինչ առողջ և դրական բան չկայ մեր հասարակական կեանքի ոգու մէջ: Ամբողջ աշխարհը հպարտանում է մարդկութեան յառաջադիմութեամբ, բայց համարեա ոչ ոք առաջ չէ գնում: Եւ եթէ քաղաքակրթութիւնը մի որ և է բարիք է տալիս՝ միւս կողմից էլ որ և է դրկանք է հասցնում մարդկու-

թեանը: Քաղաքակրթուած մարդը կառք է ձեռք բերում, բայց միև կողմից համարեա մոռանում է ոտով ման գալը: Այժմ սոպազրուող գրքերի անազին մասը վերջի վերջոյ արդեօք արդիւնաւէտ է մարդու մտքին և սրտին: Ապահովացնող ընկերութիւնները արդեօք պակսեցնում են դժբաղտ դէպքերի և աղէտների թիւը: Այժմ բարքերի նրբութիւնը արդեօք մենք չե՞նք ձեռք բերել մեր ներքին եռանդը մեծ չափով զոհելով: Պօսքով մենք շատ լաւ ենք բարբառում մեր համոզմունքները, բայց իրօք իրագործում ենք արդեօք մեր փառաւոր ճառերը: Հին ստոյիկեանների մէջ բոլորը ստոյիկ էին, բայց բոլոր քրիստոնեանների ամեն մէկը արդարև քրիստոնեայ է արդեօք: Բարոյական աշխարհում սայթաքում չկայ, որպէս և նիւթական աշխարհում շարժողութեան և ձգողականութեան օրէնքների մէջ: Մարդկային ցեղի, այսինքն անձնաւորութեան լաւանալը կամ յառաջադիմութիւնը ժամանակից չէ կախուած: Տասն և իններորդ դարու բոլոր գիտութիւնները, բոլոր արուեստները, բոլոր փիլիսոփայական վարդապետութիւնները և աղանդները չեն տուել մարդկութեան աւելի վեհ անձնաւորութիւններ, քան թէ եղել են նախկին ժամանակների ուսուցիչները, բարոզիչները և օրէնսդիրները: Այժմ մարդիկ այնքան խրուել են նիւթական շահերի մէջ, որ մարդու հոգեկան արժանաւորութիւնները չեն կարողանում ճանաչել և ոգու առաջադիմութիւնը նըրանց աչքում աւելորդ բան է: Յարգանք տալիս են հարուստին, բայց ոչ մարդուն: Բայց իսկապէս զարգացած մարդը, եթէ մինչև անգամ հարուստ էլ է, իւր անձնական արժանիքները բարձր պիտի դասէ աշխարհի բոլոր հարստութիւններից: Հոգեկան հարստութիւնն է, որ մշտական է, իսկ նիւթականը մեղ պատահականութեան և մարդկանց գերի է դարձնում:

Ոչ, բարեկամներ, մեր կեանքը պիտի հիմնենք ոչ թէ այսպիսի, այլ բոլորովին այլ սկզբունքների վերայ, որովհետև ինքնուրոյնաբար գործելով մարդս ազատում է արտաքին և խախուտ նեցուկներից և առանց ուրիշների օգնութեան մնում է իբրև անդրդուելի բարոյական ժայռ: Ամեն բան պէտք է ձեռք բերել սեպհական աշխատանքով և տոկունութեամբ և այն ժամանակ հրաշքներ կկատարուին մարդկանց ձեռքով:

Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ